ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 29

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թուրքիայում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . . . 20 դրան

ԱՐՏԱՔԻՆ ԳԻՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ
Թուրքիա . . . . . 50 ղուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Ցայտագրութիւնների վճարը
Առաջին էջ . . . տողատեղը 10 շահի
Չորրորդ „ „ „ 5 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

# ՄԻՏՔ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրել պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք „չ“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն կերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

№ 29 1912 Թ. ՇԱԲԱԹ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1912 Թ. № 29


## ԿԱՐԴԱՑԷՔ

*Քաղաքական միակ լուրջ օրգան, բազմաբովանդակ, դաստիարակիչ և յոյժ զարգացուցիչ*

## „ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ“

*Բաժանորդագրութիւնը Պարսկաստանի համար 12 ռուբլի: Բաժանորդագրուել ցանկացողները դիմելու են թերթիս խմբագիր-հրատարակչին: Ապառիկ պատուէր չի ընդունւում:* *Խմբ.*

# ԹԻՒՐՔԻԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

*Թիւրքիան դանւում է Եւրոպայի շէմքին, և սակայն ոյժեր կան, որ միակ աշխատանք ունեն նրան հակաեւրոպական դիրքի մէջ պահելու: Եւրոպա ասելով մենք երկրամաս, աշխարհագրական տարածութիւն չենք հասկանում, այլ ժամանակակից քաղաքակրթութիւն, պատմական հոսանք, որի գագաթնակէտին են հասած ներկայ եւրոպական պետութիւնները: Գուցէ աւելի յարմար լինէր եւրոպականութիւն բառով որակել մարդկային ընդհանուր զարգացման այդ աստիճանաւորումը:*

*Թիւրքան պիտի եւրոպականանա՞յ, թէ՞ ոչ: Կարո՞ղ է նա համաշխարհային կապիտալիզմի այս բուռն և անտեղիտալի մղումի առաջ՝ մնալ Ասիական մի տէրութիւն, պահելով իր պետական ներկայ կազմն ու շրջանակը: Երբ դարերից ի վեր կղզիացած և աշխարհագրականօրէն ու պատմականօրէն աւելի լաւ պայմանների մէջ գտնուող Ջապօնիան անկարող եղաւ իր նախկին շրջանակի մէջ մնալ եւ գոյութեան կռիւը նրան հարկադրեց ձեւափոխել, եւրոպականանալ,—Թիւրքիան չէ, որ իր շատ անբարեյաջող կազմով, եւրոպականութեան դռանը առաջ, պիտի շարունակել կարողանար իր կղզիացումը և ղեկավարուէր ընկերային, տնտեսական, քաղաքական այն օրէնքներով, որոնք ժամանակակից պետութիւնների համար այլ եւս գոյութեան որ և է իրաւունք չունեն և նրանցից կառչողները կամ պիտի կորչին, —դա մի երկնքարանք է, որի առաջխուսափողական աբարքը իր մէջ ունի արդէն՝ պատիժը և հետեւանքը:*

*Թիւրքիոյ նման՝ մի ընդարձակածաւալ պետութիւն, լի իրարուց ա՛յնքան տարբեր և հակամարտ տարր-ազգութիւններով,—այդ բոլորը դնել համեմատաբար աւելի սակաւաթիւ թուրք տարրի կեանքի և զարգացման շրջանակի մէջ, սրան յամենայն դէպս բացարձակ իշխող տարրի դերի մէջ պահել և պետական կազմը ամրացնել կրօնի, ցեղի և հակապիտալիստական ազդակների վրայ ու այդ կերպ մտածել այս պետութիւնը յառաջ քայլեցնել, նրա կեանքն ու գոյութիւնը շարունակել տալ,—դա կլինէր մի կատարեալ հրաշք, հակաբնական, ինչպէս որ հակաբնական է ամէն հրաշք:*

*Պետական ոյժը իրերի բնաւորութեան բոլորովին հակառակ ընթացքի է հետեւում, երբ սահմանադրական կարգերի անուան տակ ուզում է միապետական կեանքը պարփակել նախկին շրջանակի՝ աստուածպետական-աւատապետական պայմանների մէջ: Աստուածպետական, ազնուապետական Թիւրքիա այլեւս անկարող է գոյութիւն ունենալ. պատմութիւնը նրան մահուան է դատապարտել և այդ մահը որքան շատ արագացուի, այնքան աւելի լաւ „Նոր-Թիւրքիայ“ի համար: Մածուցման, բիրեղացման, անփոփոխութեան օրէնք Թիւրքիայի համար չի կարելի ստեղծել,—ինչքան ճիգեր էլ թափելու լինեն այս երկրի Ազգայնականները,—դրանով ոչ միայն իրենք իրական որ և է արդիւնքի չեն հասնիլ, այլ և անդարմանելի կերպով վնաս կը բերեն այն երկրին, որին կողոպտելը և կործանելը իրենց իրաւունքն են համարում՝ շահագործողի բարոյագիտական հասկացողութեամբ:*

*Թիւրքիան իր համեմատական ներքին անդորրութիւնը և զարգացման բնականոն ուղին կը գտնի, երբ Օրէնսդրական Մարմինը պէտք եղած բոլոր օրէնքները կանց կացնի՝ աւատականութիւնը արմատախիլ անելու և Գործադիր իշխանութիւնն էլ այդ որոշումներն օրէնքներն իրականութեան բաժինը կը դարձնի: Թիւրքիոյ ներկայ հիւանդ կազմի միակ դարմանը այդ է. եթէ ոչ՝ կը շարունակուի լինել այն՝ ինչ որ է,—քաոս, անստուգութիւն, կազմալուծումն. իսկ կեանքի այդ նեղ շրջանակի մէջ չի կարող յառաջ գալ զարգանալ մի Նոր-Թիւրքիա, ոչ միայն այդ ժամանակ իր ներքին բաղկացուցիչ տարրերից ու դասակարգերից ամեն մէկը մի կողմ կը քաշէր և ընդհանուր ու մասնակի ճախրումներ կը յառաջացրնէր, այլ եւրոպական պետութիւնները իրենք, որ ա՛յնքան շահագրգռուած են Թիւրքիայի բախտով, նրանք այդ կանէին:—Այս լաւ պիտի գիտենալ, եթէ դեռ երեւոյթապէս և ձեւականօրէն անկախ Թիւրքիա գոյութիւն ունի՝ տնտեսապէս անկախ Թիւրքիա գոյութիւն չունի, այդ տեսակէտով նա կատարելապէս անցել է եւրոպական կապիտալիստական Պետութիւնների ձեռքը: Այս երկրի շահագործման մէջ դրսինները աւելի մասն ու բաժին ունեն , քան ներսինների ամբողջութիւնը միասին առնուած, և այդ էլ այն ժամանակ, երբ ներսինները ոչ մի ապահովութիւն ունեն իրենց ձեռնարկները զարգացնելու և նպատակայարմար ուղղութեան մէջ գնելու, իսկ դրսինները այդ կողմից ամէն երաշխաւորութիւններ ունեն, —այդ այն ժամանակ, երբ ազգայնական կործանարար հոսանքից մղուած՝ տիրապետող ոյժերը չեն թոյլ տալիս, որ բաղկացուցիչ տարրերը՝ հասարակական օրգանիզմի զարգացման համար անհրաժեշտ նկատուած՝ ամենատարրական իրաւունքներն ու պայմաններն ունենան.—դեռ այս երկրի մէջ յամառութիւն կայ՝ դասակարգային շերտաւորումի առաջ ոչ միայն խոչընդոտ յարուցանել, այլ նրա յառաջխաղացումը խատիւ արգիլել, կարծելով թէ մի քանի օրէնք—բանաձեւեր և ոստիկանական կարգադրութիւններ հերիք են, որպէսզի պատմական բուրգերը գլխի վայր շրջուեն և կանգուն մնան:*

*„Իտտիհատ“ի ամենամեծ սխալը, եթէ ոչ ոճիրը այն եղաւ, որ այս չորս տարուայ ընթացքում, իր կուսակցական տիրապետութեան շահից մղուած, ոչ միայն աւատապետներին իր շարքերի մէջ առնելով՝ նրանց առաջնակարգ տեղ տուեց, այլ այդ աւատապետութեան պաշտպանը հանդիսացաւ՝ իր ազգայնական ներքին քաղաքականութիւնից տարուած: „Իտտիհատ“ը չէր, որ Հողային Հարցը կը վճռէր, նա շատ լաւ գիտէր, որ այդ հարցի վճռուիլը իր ծրագրի և փայփայած միտումների դէմ երթալ ասել է. հէնց դրա համար էլ նա տեղական ազդեցիկ աւատապետներին իր գործիքը դարձնելով՝ նրանց հրեց դէպի սանձարձակութիւն: Հայաստանի մէջ կատարուած այսօր. բոլոր ոճիրները՝ մասնակի և ամբողջական, դրանք բոլորը բացառապէս արդիւնք և հետեւանք են Իտտիհատական հասկացողութեան, իտտիհատական քաղաքականութեան,—պետական ամբողջ պաշտօնէութիւնը, մասնաւորապէս Հայաստանի մէջ, իտտիհատականներ են իսկ աւատապետ,—աւազակապետներն էլ նրանց կամակատար գործիքները:*

*Այսպէս, նրանք, որոնք այս երկրի մնայուն շահի տեսականութեան, բարգաւաճման տեսակէտից են խօսում, նրանք՝ եթէ անկեղծ են և պատմական բոպէի պահանջին բաւականութիւն տալ*

են ուզում՝ նրանք իրենց քաղաքական առաջին և գլխաւոր ուղեգիծը պիտի անեն օր առաջ ընդել աւատապետութիւնը, որպէս դրութիւն, սիստէմ, և նրա մարմնաւորող, անձնաւորողներին պատմութեան ժամանակակից շրջանից դուրս նետել,—դրա մէջն է այս երկրի իրական շահը, ամեն բաղկացուցիչ ազգութեան համար անխտիր։

Ս. Սապահ-Գիւլեան „Նոր-Աշխարհ

№-66

## Տաճկահայերին կոտորողները.

«Новое Время» լրագրի երեկոյեան հրատարակութեան մէջ («Вечернее Время»), 30 օգոստոսի, խօսելով «Հայկական կոտորածի» մասին Փոքր Ասիայում, և հաղորդելով մի քանի տեղեկութիւններ, որոնք արդէն յայտնի են մեր ընթերցողներին, այն կարծիքն է յայտնվում որ Ջարդերի գլուխ կանգնած և կազմակերպիչ Մուսաբէյը գործում է «Իթթիհադ» կուսակցութեան ծածուկ հրահանգով և ծրագրով։ «Այդ քիւրդը,—ասում է լրագիրը,—յարել է «Մ. և Ա.» կուսակցութեան, և այդտեղ մեծ դեր է խաղում։ Այժմ, երբ «երիտասարդթիւրքերի» ըէժիմը տապալվել է, Մուսաբէյը որոշել է ստեղծել ներկայ թիւրքաց կառավարութեան համար որ գնում է հակառակ „երիտասարդթիւրքերին“, ամեն տեսակ բարդութիւններ, և անկասկած է, որ քիւրդերի հանդէս գալը առանց „երիտասարդթիւրքական“ կոմիտէտի ծածուկ մասնակցութեան չէ։ Մնդիրն այն է, որ հայերը չէին համակրում երիտասարդթիւրքերի կոմիտէտին և դրանով ըստեղծել են յարմար հող ագիտացիայի նրանց դէմ։ Առ այժմ, դատելով ունեցած տեղեկութիւններից, կոտորածը առանձին սպառնալից ծաւալ չէ ընդունել, թէև վերջին օրերը սպանվել են Փոքր-Ասիայի զանազան տեղերում 130 հայեր։ Հայկականնշանաւոր ջարդերի ժամանակ սպանուեցին և վիրաւորվեցին մինչև 300,000 անձինք։ Ներկայումս օսմ. կայսրութեան սահմաններում ապրում են 2,500,000 հայեր։ Սահմանադրութիւնը հրատարակելուց անմիջապէս յետոյ, 3 տարի առաջ, նոյնպէս տեղի ունեցաւ հայկական կոտրած, և սպանուեցին մինչև 25,000 հոգի։ Թիւրք ժողովուրդը մասնակից չէր կոտորածին, այլ գործում էին միայն քիւրդերը, Մուսաբէյի գործակալները և վարձկան մարդիկ, որոնց վճարում էր ինքը թիւրքաց կառավարութիւնը, որ ցանկանում էր կոտորածը“։

Ապա ռուս թերթը յայտնում է, որ իբր մեծ կոտորածների առաջ ենք կանգնած։

„Մշակ“ №-201

## ՕԳՆԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ.

Ողորմելի տնտեսական կացութիւն ունի, ուրեմն և աղքատ է Պարսկաստանը, ուստի և աղքատ է նրա ազգաբնակութիւնը։ Գոյութեան կռիւը գնալով աւելի ու աւելի է սաստկանում, կեանքը աստիճանաբար աւելի է թանգանում, շռայլութիւնը մեծ չափեր է ընդունում և առաջացնում տնտեսական կրիզիսները, առանց այն էլ, մեր աշխատ ժողովրդի համար։ Հարուստը, առևտրականը ինարկէ, դիմանում է տնտեսական մրցման, կեանքի թանգութեան, հապա չշաւիղը, արհեստաւորը, միջակ կարողութեան տէրը։

—Դրանք աստիճանաբար գնում են դէպի կործանում, դէպի քայքայում։

Որքան պատուախնդիր, նամուսի տէր, աշխատող, գործի և առևտրի ընդունակ մարդիկ ու արհեստաւորներ մնացել են այսօր ձեռները ծոցին, վիզները ծուռ և ամօթահար իրենց ընտանիքի ու զաւակների առաջ, անգործութիւնից և փողի պակասից։

Ո՞վ նրանց կօգնի, ո՞վ փող կը-վրստահանայ։

—Ոչ մի վաճառական. ոչ մի դրամատուն։ Կառավարութիւնն էլ այն գիտակցութեան չի հասել և կամ չունի այն միջոցները որ բանայ կրեդիտային հիմնարկութիւններ իւր ժողովրդի համար։

Ուստի ինչ չի անում կամ չի գիտակցում կառավարութիւնը, անենք մենք հայերս և անենք մեր խեղճ հայ ժողովրդի համար։

Ժամանակ է, որ հայ վաճառականները դուրս գան իրենց նեղ շրջանակից, ժամանակ է, որ նրանք հիմնեն մանr վարկի ընկերութիւն, որ ածան տոկոսով և բաւարար չափով փող բաց թողնէր մեր կարիք ունեցող հայերին, որ նրանք էլ դրանով կարողանային իրենց դրութիւնը բարուոքել։

Քանի՞ քանի մարդիկ կան, որ 5-600 թումանով, կամ 100-300 թումանով և անգամ 50 թումանով կարող էին nsfի կանգնել, գործ սկսել առևտուր անել, փրկել իրենց դառն դրութիւնից եթէ մեր մեծ վաճառականներընման Ռուսահայերի, այստեղ ևս հիմնէին մանr կարկի ընկերութիւն։ Դորանով մեր վաճառականները շատ մեծ դիւրութիւն ստուած կլինէին շատ և շատ անհատների իրենցգործերն ընդարձակելու որով և շատ մեծ չափով էլ կը վերանար անգործութիւնն ու աղքատութիւնը մեր խեղճ ժողովրդի միջից։

Թաւրիզի վաճառականներ, օգնէք մեր օգնութեան կարօտ ժողովրդին։ Մեր ժողովդի կայունութիւնն ու ուժեղութիւնը տնտեսական ապահովութեան մէջ է, ուստի նպաստեցէք այդ ապահովութեան։ Ա. Տ.-Վ.

## ԲԱՑԱՐԱԿ ԽՕՍՔ

—

Մենք հայերս դժբաղդ ենք ոչ թէ նրանով, որ զուրկ ենք քաղաքական անկախութիւնից.... այլ դժբաղդ ենք մեր ինքնայատուկ մտածելակերպով, մեր «հայկական» դատողութեամբ։

Աւելի քան մի դար է, որ մենք ունենք մամուլ։ Եւ դրանց թիւը մի քանի տասնեակ է։ Չնայած դոցա այդքան հարստութեան՝ մեր մէջ վէճերն անվերջ են, սկզբունքներն անհաշտ և իրար չհասկանալի ու անհամոզիչ մնալը յարատև։

Ցոյց տուէք մամուլի մի օրգան, որին հասկանալու և համոզուելու միտում է ցոյց տալիս հակառակորդ օրգանը։ Մեզանում կրքերն այնքան ուժեղ են և մեր աչքում հակառակորդներն այնքան «մանր», «տգէտ», «խաւարամիտ» և «արհամարհելի», որ այլ ևս չենք լսում այդ «մանրութեանց»կարծիքները, որ իրօք յաճախ ոչնչով տարբեր չեն մերինից, այլ որովհետև ասողը հակառակորդն է, նախապաշարուածօրէն կարծում ենք թէ յիմարութիւններ է ասում, կամ «յետին միտումներով» է առաջնորդւում։ Պարզ ասած՝ մեն չենք հասկանում կամ՝ դիտմամբ չհասկանալ ենք ձևացնում, մինչդեռ այդքան առատ օրգանների միասիան հէնց հասկացնելն ու հասկանալուն համոզելն ու համոզուիլը պիտի լինէր։

Տարաբաղդաբար այդ հասկանալը չկայ մեզանում, որքան և պարզ ու կարուկ, անկեղծ ու անվերապահ արտայայտուած լինիք դուք։ Մարդիկ չեն կարդում հասկանալու ձեր գրածը, այլ կարդում են անպայման մի կարծեցեալ հաշուեյարդարութիւն, կիրք, ինսինուացիա և վարկաբեկումն փնդռելու նոցանում, որովհետև իրանց արշինով չափելով ձեզ, ենթադրում են որ դուք իբրև ախոյան, իբրև հակառակորդ՝ երևոյթները դատելու միակողմանի վերաբերմունք ցոյց կաք և չէք կարող կօբրեկտ ու արդարամիտ լինել ձեր արտայայտութեանց մէջ։

Արդարև մեծ դժբաղդութիւն է այդ մի ազգի համար։ Ինչպէս ասում են. կուզէք ձեր 5 մատերը վառէք և ճրագ դարձրէք, այնուամենայնիւ մի «բայց» կնկատեն ձեր զոհողութեանց մէջ և .վերջապէս... չեն հասկանայ ձեզ։ Դէհ, այդպէս կարճ է մերոնց մտածելու կերպն ու դատողութիւնը։

Եւ այդպէս չհասկացան մեզ նաև մեր շրջապատում, չնայած մեր գրածը շատ պարզ էր, շատ որոշ և միանգամայն փաստացի։ Եւ չհասկացողները պաշտօնական անձինք են։

«Նոր կազմ և միանգամայն նոր ընտրութիւններ» վերնագրով մեր յօդուածում մենք հէնց առաջնորդարանի յայտարարութիւններով փաստել էինք օր կազմալոյծ է թեմ. ժողով և թեմ. խորհուրդ։ Նոյնը զեկուցել էր Վեհին[1]) և առաջնորդական տեղապահ Կարապետ քահանան շաբաթներ առաջ։ Հետևաբար՝ ասել էինք մենք, կազմալոյծ մի մարմնի ընտրութիւնը ապօրինի է։

Նորից ասում ենք մեր բացարձակ խօսքը։ Մենք ընտրեալի-բարձրապատիւ տ. Ներսէս վրդպտ. Մելիք-Թանգեանի դէմ ոչինչ չունինք։ Նա՝ անհատաբար և մեր ընտրելին կարող է լեներ։ Մենք ասել և ասում ենք՝ չկայ պատմ. կազմ ըստ առաջնորդարանի յայտարարութեանց և նրա առեղծուածային հաւաքումն ու ընտրութիւնը չի կրում օրինական և ժողովրդական բնոյթ և վստահութիւն՝ հասարակութեան մէջ։

Մենք դատապարտում ենք պատգամաւորներին, որ հրաժարուելով և ամիսներից ի վեր ժողովի չգալով, մէկէն եկել էին նիստի խորհրդակցական օրակարգով և յանկարծ անցել ընտրութեան և այդ շտապ, ոչ-օրինական կազմով ընտրութիւն անելով հակառական դիրքի մէջ են դրել և հ. Մել.-Թանգեանին, որ սեպ. 17-ին Վեհին հեռագրով յայտնել է իւր հրաժարականը առաջնորդութիւնից։

Մենք գիտենք, որ անցեալ նստաշրջանում պատգամաւորները քուէարկել, և արձանագրել են մի որոշում, որ պատգամաւորներից ով 4 նիստի չգայ, այնպիսին դադարում է պատգամ. լինելուց։ Սեպտ. 7-ին առաջնորդական ընտրութիւն անողներից շատ շատերը ոչ միայն 4 նիստի, այլ և 14 նիստի չեն եկել։

—Frgo, նրանք պատգամ. չեն։ Գոնէ պատգամաւորներն իրենք իրենց որոշման հետեւողական մնան։

Բացի այս, եթէ թեմ. ժողովը և թեմ. խորհուրդը կազմալոյծ չէին, ինչու մնացեալ պատգամաւորները բողոք և հերքում չտուեցին երբ առաջնորդարանը երեք անգամ երկու ժողովներն էլ կազմալոյծ յայտարարեց։ Եթէ մեր «պատգամաւորները» իրենց «ժողովրդի ընտրեալ են համարում», ինչու են կլոր մնում աթոռներին, օն առանց երկիւղ կրելու թող առաջարկեն նոր ընտրութիւններ, համոզուած լինելով որ էլի ժողովուրդը կընտրի իրենց։

Մենք ցաւում ենք, որ իրենց պատգամաւորական պաշտօնին լրջութեամբ չվերաբերուողները առիթ տուին հայր Մել.Թանգեանիանձի շուրջը ստեղծուէին ասէ կօսէներ, որոնք և դրդեցին նրան հրաժարական տալու, մինչդեռ բարձրապատիւ հայրը շնորհիւ իւր ցուցադրած աշխատասիրութեան, իրաւագիտութեան, արթնութեան և ռուսաց լեզուն տիրապետելուն կարող էր մեծապէս օգտակար լինել մեր բազմակարօտ թեմին։

Վստահ ենք, որ Վեհափառը չի ընդունի հ. Մ. Թանգեանի հրաժարականը, կհրամանագրի կատարել պատուիրակների նոր ընտրութիւն և նոր, օրինաւոր ու ժողովրդական պատգ. կազմն էլ կընտրի մեր իրաւաբան կառավարչին։ Ահա մեր վերջին և բացարձակ խօսքը։ Կարծում ենք այժմ մարդիկ կհասկանան մեզ։

Մի վերջին խօսք էլ մեր պ. պ. պատգամաւորներին։

Դուք կամ պէտք է տաք և պընդէք ձեր հրաժարականը և կամ՝ երբ հրաւիրուում էք՝ պէտք է պարտադրաբար գնաք միշտ ժողովների և ոչ թէ ստորագրէք որ կգնաք և սակայն չէք գնում ժողովի։ Այսպիսով դուք ստեղծել էք առաջնորդարանի համար մի հակասական և անելանելի դրութիւն։ Դուք որոշում էք կայացրել 4 նիստի չգալու և պատգամաւորութիւնից դադարելու մասին և ըստ ձեր որոշման ձեզնից շատերը արդէն պատգմ. չէք։ Շատերդ էլ հրաժարական էք տուել և այդ հիմամբ էլ Կար. եպսը. և իր խորհրդակիցները թեմ. ժողով և խորհուրդ կազմալոյծ էին յայտարարել՝ պաշտօնական թերթով։

Վերջապէս դուք ձեր դերն ու դիրքը պարտաւոր էք ճշտել և հաստատուն մի կամք ցոյց տալ։ Ձեր անորոշութեանց պատճառով տուժում է թեմը և առաջնորդարան էլ մնում է կաշկանդուած։

Sapienti sat. Սիրոր

## ԿՕՆՑԵՐՏ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Ամսոյս 15-ի գիշերը Արամեան դպրոցի թատերասրահում պ. Սամսոն Կարապետեանը իր խմբով տուեց Ասիական և Եւրոպական մօթիւներից մի կօնցերտ առաջին անգամ Թաւրիզում։ Նուագում էին թառի, քէմանչի և դափի վրայ։

[1]) Տես նա և «Հորիզոն» № 207 Թ. Թ.

Նուագները վարձատրում էին ծափահարութիւններով։ Կռունկը սօլօ նուագեց պ. Կարապետ Եդգարովը բայց անյայտող։ Ապա սօլօ թառի վրայ նուագեց մի քանի պարսկերէն եղանակներ պ. Սամսոն Կարապետեանը։

Պարոնի նուագը վարձատրուեց ծափերով։ Պարոնը անպայման լաւ նուագող է և խիստ զգացմունքով լարահարող։ Աւելին ասել այդ առթիւ պատկանում է զուտ մասնագէտ երաժիշտներին։ Մեր տպաւորութեամբ՝ պ. Սամսոնը գերազանց նուագող է և նրան պարսկական նուագներում չի նշմարւում այն նիրհն ու մելամաղձոտութիւնը, որ յատուկ է պարսիկ նուագողին և երգողին։ Յուսով ենք Թաւրիզի հայ հասարակութիւնը կը քաջալերէ մեր նորեկ հիւրերին և հոծ բազմութեամբ կերթայ լսելու այդ խմբի կօնցերտները, որ մեծ բաւականութիւն են պատճառում ընկնդիրներին։ Ճ.

## ԹՂԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

*2 Սեպտեմբեր Թէհրան*

### Հայերի դրութիւնը Սուլթանաբադում

Մօտաւորապէս տասը օր է, որ Թէհրան է հասել Սուլթանաբադի առաջնորդական փոխանորդ Խորէն վարդապետը։ Ցիշեալ վեղարաւորը մի առանձին պարծանքով է պատմում այցելուներին իւր քաջաբար կատարած կռիւները այդ շրջանի պարսիկ խաների հետ, ինչպէս նաև «հերոսաբար» փախուստը Ագնայից-Սուլթանաբադ, և ապա Համադան, իսկ այնտեղից էլ Թէհրան։ Մարդ մի բոպէ մնում է տարակուսած՝ նկատելով թէ որքան անխիղճ կերպով են մարդիկ վարւում իրենց կոչման և ժողովրդի հետ։ Նա ուղարկուած չէ եղել այդ շրջանի առաջնորդական փոխանորդի համեստ պաշտօնով, այլ որպէս Դաշնակցական «քաջարի» մի զինուոր ուղարկուած է եղել Հայ և Պարսիկ միմեանց դէմ լարելու՝ ծագեցնելու զանազան վէճեր, որպէս զի հետևանքը Արիւն ու Աւարի յանգի, իսկ ինքը գալով Թէհրան՝ անվերջ ագերսագրեր ներկայացնի ներքին գործոց նախարարութեանը

Մենք այժմ անցնենք սպանուած և կողոպտուածների մանրամասնութեանը։ Սամսամ էլ Մամալիք, նրա եղբայր Հաջի Ամիր Թուման, Քովքէպ Դովլի տղայ Բաղր խանը, Խորէն Վարդապետի անձնաւորութեան հետ նախապէս թշնամութիւն ունենալով՝ Օգոստոսի սկզբներում յարձակուել են Ագնա կոչուած հայաբնակ գիւղի վրայ բռնելու և սպանելու Խորէն վարդապետին ու կողոպտելու յիշեալ գիւղի բնակիչ հայերին։ Սակայն նրանք հանդիպում են Ագնացիների անսպասելի ուժեղ դիմադրութեան, որովհետև վերջիններին պաշտպանելու էին եկել հարևան գիւղերից մի քանի խաներ։ Այդ դէպքում յարձակուողները չկամենալով դատարկաձեռն վերադառնալ, բաց են թողնում Ագնան և յարձակւում Սէյտուն կոչուած գիւղի վրայ, ամբողջապէս կողոպտում են տասը հինգ տուն հայ բնակիչներին ի վրէժ Ագնացոց դիմադրութեան։ Ըսպանում են Թադէոս Գէորգեանին, Սերոբ Ենովքիանի, և շատ ծանր վիրաւորում են Սմբատ Խանբաբեանին, ի վրէժ Խորէն Վարդապետի։ Սակայն արիւնարբու ձրիակերները այդ քանով չեն բաւականանում։ Եւ ինչպէս կարդ էին բաւականանալ, բանի որ այդ արիւնաթաթաւ գազանների ախորժակը հազիւ էր գրգռուել անտէր ու անտիրական, խեղճ ու կրակ մեր ազգայինների ունեցած այծերի-եզների կովերի և խղճուկ տնային իրերի կողոպտմամբ։

Վերադառնալով իրանց տեղերը աւելի մեծ ոյժ կազմելու՝ իրանց թուի վրայ աւելացնում են քանի գազաններ ևս, որոնք են Սաամ Սուլթան, Մուիդ Դովլէ, Հաջի Սէյիդովլէ, վերջինների հետ միացեալ ուժերով 5-6 օր յետոյ շրջապատում են Ագնան, մի քանի հարիւր ձիաւորներով։ Խորէն վարդապետը տեսնում է որ այլ ևս ուրիշ ճար չկայ բաց առեալ փախչելը։ Այն խաներն էլ որոնք նախապէս օգնում էին հայերին այժմ միացել են թշնամիներին ու խնդիրը դառնում է իրա շուրջը՝ անմիջապէս «հերոս» Ֆիդայի-վարդապետը մտածում է կծիկը դնել և ահա շնչասպառ հասնում է Սուլթանաբադ։ Իսկ վայրենիների հօրդան մտնում է գիւղը, սպանում Յակոբ Ղազարեանին, Թայիր Սուլէյմանին, Թուրք Ալիին և որդուն, և մի Թրքուհի՝ Նովրուզ Մուղաննու կինը (վերջին երկուսին պատահմամբ է գնդակ կպել)։ Սպանութիւններից յետոյ գազանները կողոպտում են Ագնացոց կովը, եզը, էշը, ոչխարը, տան պարագայք, մի խօսքով ինչ որ կար։ Ագնայի մնասը հասնում է 50-60 հազար թումանի։ Վերոյիշեալ քանի հարիւր ձիաւորները չորս ժամ շարունակ մնացել են Ագնա գիւղի մէջ, և այդ չորս ժամուայ ընթացքում ինչեր է կատարուել, որքան կին ու աղջիկ են լկուել և այլն, կը մնայ ընթերցողի երևակայութեանը։ Ըստ կարգին Ագնան կողոպտելուց յետոյ, հայերից քանիսին որպէս գերիներ վերցնելով հեռանում են, սարսափելի տանջանքներով գերիներին հասցնում են մինչ Զէյրաբատ, ապա ազատ են անում ասելով խաբարը տարէք խալիֆային. (առաջնորդին)։

Ինչպէս ամէն տեղ, ևս առաւել այս շրջանում հայ ու պարսիկ խաղաղ ու հաշտ ապրում էին իրար հետ Սակայն այնօրից, երբ քեալլակեօզութիւնը բուն դրաւ մեր... «ազատարար»ների մէջ, ամէն ինչ եղաւ տակն ու վրայ։ Պրօգրես, ազատամտութիւն համարուեց որ վարդապետն ևս դառնայ յեղափոխական-մարտական պրօպագանդիստ, մոռանալով իւր իսկական առաքելութիւնը։ Այս տեղից ահա այն տակն ու վրայութիւնները, որ առաջ են բերել նոքա, իսկ ներկայ դէպքում Խորէն չիք վարդապետը, որի պատճառած փնասները հազիւ թէ կառավարութիւնը կարողանայ առնել և դարձնել հայերին։

Պարսիկ խաների այդ աստիճան թշնամական վերաբերմունքը դէպի հայերը և ընդհանրապէս դէպի Խորէն վարդապետը առանց սկզբնապատճառի չէ, սակայն այդ մասին մենք լռում ենք, քանի որ ժամանակը յղի է անակնկալներով։

Տ. Բ.-եան

*6 Սեպտ. Թէհրան*

### Երկու Հակառակորդ բանակների շուրջը

Եար-Մահմադ խանի բանակը քանի օր առաջ հասել է Բիւրտստան, իսկ կառավարութեան բանակը՝ Քիրմանշահ։ Այս երկու քաղաքների ազգաբնակիչներն էլ առանց մի փոքրիկ դիմադրութեան նշոյլ անգամ ցոյց տալու՝ գրկաբաց ընդունել են բանակներին, չնայելով որ նրանց ցանկալի չէր տեսնել ոչ առաջինին ոչ էլ վերջինին։

Տարբեր ճանապարհներով անցնելով երկու բանակները չեն հանդիպել միմեանց։ Վերջի կէտը մի քիչ դժուարացնում է գործը, որովհետև Ֆէրման-Ֆէրմանը քաջ ծանօթ է այդ շրջանի բոլոր վայրերին. նոյնպէս Սալար-Դովլէն և մանաւանդ, Եար-Մահամադ խանը, որ ծնուել, սնուել և մեծացել է այդ շրջանում, ուրեմն ինչպէս կարող են չհասկանալ, որ հակառակորդ բանակը անցնում է և այն էլ ո՞րտեղից։ Կարծւում է որ ըմբոստ բանակամասի հրամանատարները չկամենալով երկու բանակները զարնել միմեանց, որպէսզի չլքուեն զինուորները և չսպառուի առանց այն էլ սակաւ ռազմամթերքը։ Այդ շատ պարզ ապացուցւում է նրանով, որ կառավարութեան բանակը հազիւ էր շարժուել Քուրտիսթանից, որ ահա ըմբոստները դատարկում են Քիրմանշահը, որպէսզի առաջինները գալով առնեն իրանց հանգիստը. իսկ իրանք կողմնակի ճանապարհներով թէև հեռու շտապեն վերցնեն Համադանը, որով ընդ միշտ կարած կը լինեն Ֆէրման-Ֆէրմանի հաղորդակցութիւնը կենտր. կառավարութեան հետ։ Այսպիսով կենտր. կառավարութիւնը չի կարենայ օժանդակ զօրք հասցնել Ֆէրման-Ֆէրմանին։

Շտապ օգնութեան հասնելու նպատակով կառավարութիւնը ջղայնացած կազմակերպում է Բախտիարցիներին, տալով նրանց յետամնաց ռուճիկներն ու աւանս, նորակազմ մանուկ ժանդարմիայի հետ ուղարկելու Համադան։ Մեր կարծիքով արդէն ուշ է, որովհետև մինչ կազմակերպուեն և ճանապարհուեն Համադան, կանցնեն առաւել քան տասը օրեր, և այդ դասը օրերի ընթացքում, արդէն վերցրուած կը լինի Համադանը ըմբոստների կողմից։

Թէ մանուկ ժանդարմաների ու բախթիարցոց •ինչքան կը յաջողուի զինու ոյժով դատարկել Համադանը, Եար-Մահամադ, և Սալար դովլէականներից, այդ էլ ժամի ապագան ցոյց կ'տայ։

Յովսէփ Միրզոյեանցը, այժմ Քիրմանշահ է և նամակագրութեամբ շարունակել է հաշտութեան համար բանակցութիւններ Եար Մահմադ խանի և Սալար-Դովլի հետ։ Մինչ ցարդ կատարուած բանակցութիւնները ոչ մի արդիւնք չունեցան ի նպաստ երկու կողմերի էլ, թէև կառավարութիւնը որոշել է բոլորովին չզիջել ըմբոստներին, բայց և այնպէս այս անգամ իր յաջողութիւնն էլ կասկածելի է։

Ամսոյս 8-ին Եուսուֆաբադում կայանալու է Շվէտացոց կազմած ժանդարմերիայի զօրահանդէսը, ուր և հրաւիրել են մանուկ Շահին։ Դժուար թէ գնայ։ Զօրահանդէսից յետոյ մի Շվէտացի սպայի հրամանատարութեամբ ճանապարհուելու են Համադան։

Վերջին պահուն տեղեկացայ, որ Խորէն վարդապետը դիմելով Ռուսաց-Դեսպանատանը, վերջինիս պաշտպանութիւնն է խնդրել որպէս Ռուսահպատակ. իսկ Ռուսաց-Դեսպանատունն էլ հեռագրել է հարկաւոր եղած տեղերը՝ ստուգելու թէ Խորէն վարդապետը ռուսահպատակ է թէ ոչ։

Տ. Բ.-եան

—

*Սեպտ. 9 Սուլդուզ (գաւ.),*

Յօրէ անտի,երբ ոտք են դրած և հաստատուած աստ օսմանցիք, ժողովրդի վիճակը, դրութիւնը կերպարանափոխուեր է. չկան առաջուան զուլումները, կեղեքում, ճնշում, հարստահարութիւն վերացել են, զարափափա աղաները զսպուած են բոլորովին, որք մէկ ժամանակ կարծես կ'մրցէին մէկմէկու հետ իրանց գործած սխրագործութեամբ։ Գիւղացին իւր դառն քրտինքով աշխատանաց լրիւ տէրը չէր, արդիւնքի գրթէ $^1/_3$-ը իրեն ձեռքը կ'ընկնէր, իսկ մնացեալը կալուածատերց և ծառայից սեփականութիւնն էր։ Մը բայթը (Ղարափափա թուրք, քիւրդ, հրէայ, հայ և ասորի) կ'համարձակուէր աղայի ձեռքէն արզ անել։ Այդպիսի ,,ստահակ''-ին ,,յանդուգն''-ին վիճակուած էր կանուխ կամ ուշ կենազրաւ լինել՝ ի խրատ և զգուշութիւն այլոց...

Կենաց, ընչից, պատուոյ կատարեալ ապահովութիւն կ'տիրէ հիմա, ,,ոսկի դիր գլխուդ վրայ, ընկի ճանապայ'' հարց է թէ մինչև վերջը պիտի շարունակուի այսպէս։

Ես, ,,պարզն ասեմ և ոչ ամաչեմ'' մի քիչ յոռետես եմ թուրքերու վերաբերմամբ, այնքան ալ հաւատ չունիմ նորանց վրայ, լցիւ թէ սխալուած ըլլայի, բայց օրինակներն ինչ կըսեն։

Օսմ. զօրաց թիւը կ'յանգի համարեա թէ 300-ի՝ զետեղուած Նազադէ և Բահդանա գիւղերը, որոնցմէն մօտ 90-հայ են։ Բահդանայի ասկարները կ'կոչուին հիւդիս (սահմանապահ), որք 25-30 հոգի կ'հաշուին։ Նազադէի մէջ կան 5 թնդանօթ. այս տեղ են նստած 2 գայմագամները. միւթիեա (քաղաքական) և ասկերիա (զինուորական)։

Օսմանցիք ունեն նաև Նազադէի մէջ Բալադիա (քաղաքային վարչութիւն) չորս ազգութենէ թուրք, քիւրդ. հրէայ և հայ), որոնց նախագահն է Ալի-Ղուլի խան Աֆխամի Մամալիքը։ Սոյն մարմինը իճարայով (Կապալ) է տուել Նազադէի բազարը 1350 թուականով։

Բաթէ

—

### Գիլանեան նամակներ

—

*10 Օգոստ. Էնզելի*

Թալիշ Թուրքերը ունի լաւ անպատներ։ 1910 թուին-ուղիղ մի տարի անց՝ Պարսկաստանը անուղղակի հարկ ծանր բեռան տակ մտնելով, գրգռում է ախորժակը օտարերկրեայ կապիտալիստների, որոնք իրարու յետեւից թափւում են Գիլանի հարստութիւնը թալանելու։ Իւրաքանչիւրը 2-300 թումանով տակդին անտառների իրաւունք է ձեռք բերում մեծ ու

վաքը խաներից, մինչդեռ կառավարութեան դանձարանը մի սանտիմ էլ չի օգտուում շահագործուող և միլիոններ արժող այդ անտառներից։

Յեղափոխական հերոսները այնքան կոյր էին, որ այդ հարստութիւնները չէին տեսնում, որպէսզի թալանի առաջն առնէին։ Նրանք զբաղուած էին աւելի մեծ թալաններով-քաղաքներում պատրաստ հարստութեան վրայ միայն աչք տնկելով։

Ի Թիւս շատերի Զարդամն էլ իւր անտառներից տալիս է վրացի ազնուական Ղահրաման անուն մարդուն, կաղնիի տախտակ և փայտ կտրելու։ Վրացին Վրաստանից 50-60 հոգի բանուորներ բերել տալով 1-2 ամիս կլինէր կտրել էր տալիս անտառը. 1910 թուի գարնանը մի գիշեր վրացու պատրաստի փայտը սկսում է այրուել։ Վրացին գնումէ Ռաշտ Ռուսաց հիպատոսին գանգատուում, 60,000 բուբլու վնասի պահանջ ներկայացնելով Զարդամից։

Հիւպատոսը յանուն իւր հպատակի շահերի պաշտպանութեան՝ Քարկուզարի միջոցաւ դիմում է Պարսից կառավարութեան, որ Զարդամից ստանան իւր հպատակի փնտները։ Մի ամբողջ տարի պարսիկ կառավարութիւնը չի կարողանում Զարդամին Թալիշից տանել Ռաշտ, սակայն հիւպատոսը էլի պահանջում էր կառավարութիւնից, որ տեղեկութիւն չունի թէ Թալիշ անուն գաւառ ունի թէ ոչ։ Եթէ իմանար՝ նրա բնական հարստութիւնից էլ մաս կունենար, կիմանար թէ ով է ծախել ով է այրել։ Կառավարութիւնն ստիպուած էր ընդունելու պ. Հիւպատոսի պահանջը, քանի որ ինքը անոյժ էր Զառղամին դատելու, արդար էր թէ մեղաւոր, այդ նրան յայտնի չէր։

Հիւպատոսը այսպիսով վատ տրամադրուեց դէպի Զառղամը։

Երկրորդ առիթը հետևեալն է։ 1911 թուի դեկտ. 8-ին Ռաշտի դէպքերի պատճառ եղող յայտնի սէյիդ Աշրաֆը երբ Ռաշտուց փախչում է, Թալիշով անցնելիս մի գիշեր մնում է Զառղամի մօտ. այդ էլ երկրորդ առիթն էր որ ներկայացաւ։

(Շարունակելի) Անհաշտ

# ԼՈՒՐԵՐ

## ԹԱԻՐԻՉ

—

Սեպտեմբեր 17-ին, երկուշաբթի օրը, Սուբ Խաչի տօնի առթիւ դասեր չեղան քաղաքիս ազգային երեք դպրոցներում։ Կաթոլիկ միսսիան ևս այդ տօնի առթիւ տրձակել էր իւր սաներին։

Սեպտ 17-ին Ատրպատականի առաջնորդութիւնից Վեհափառին հեռագրով իւր հրաժարականն ուղարկեց բարձրպ. հ. Ներսէս վարդապետ Մելիք Թանգեանը։

Ամսոյս 18-ին հ. Մ. Թանգեանը պատգամաւորներին հրաւիրել էր ժողովի Դուխարզանի էջմիածնապատկան կալուածի մասին մի տնօրինութիւն անելու։ Ստորագրող պատգամաւորներից եկել էին միայն 8 հոգի, պակաս էին տասը ձայն ներկայացնողներ։

Այս վերջին նստաշրջանից ընտրուած թեմական խորհուրդը, հանգուցեալ Ենովք Բժշկեանի որբերի 6-700 թուման, կարծեօք, փողերը վերցնելով մի տարի առաջ, ուղարկել է Գերմանիա և մեքենաներ պատուիրել։ Առ ի չգոյ է դրամի, այժմ նոյն որբերը բողոքականաց դպրոցից դուս արուելու վտանգի են ենթակայ, որովհետև իրենց փողերը վերցուած լինելով հնար չունին 80 թուման պահանջուած թոշակագրամը տալ։ Հրաւիրում ենք հասարակական գործերով հետաքրքրուող անձանց ուշադրութիւնը։

Գրաշարի երկօրեայ հիւանդութեան և թերթը հերթից չուշանալու և շտապով լոյս ընծայելու պատճառով «Միտք» № 28-ի մէջ սպրդել էին բաւական սխալներ, որի համար խնդրում ենք ընթերցողների ներողամբտութիւնը։

«Միտք»ի № 27-մէջ յարգոյ Աւագ խան Աֆթանդիլեանի «Ես ճանաչել եմ նրան 80 ական թուականից» պիտի լինի «70-ական»...

Մեզ հաղորդում են, որ իբր կեղծ. դպրոցի անցեալ տարուայ աշակերտուհիներից, որոնք հակառակ մանկավարժական ժողովի որոշման քննութեան չէին եկել և չեն ստացել վկայականներ, հրաւիրել են Լիլաւայի դպրոցը վարժուհութեան պաշտօնի։ Ուրախ ենք, որ գերազասում է տեղացին սակայն թող ընտրեն վկայական ունեցողներին։

Սալմաստի հայերի վէճը իրենց գիւղատիրոջ դէմ դեռ շարունակում զբաղեցնել առաջնորդարանը։ Ինչպէս թէ հաջի Շօջա-էդ-Դովլից և թէ Սրփահդար Ազամից առնուած նպաստաւոր հեռագրական հրամանների, կալուածատէր հաջի թաղին թէ մնում է Սալմաստում և թէ օրէցօր նորանոր հայ ու թուրք գիւղացիներ լեցնել տալիս բանտը։

Սրփահտար-Ազամի կողմից ուղարկուել է մի առանձին մէմուր այդ կնճռալից հարցին վերջ տալու. Մէմուրի մեկնելուց յետոյ էլ հաջի թաղին նորէն ձերբակալել է տուել հայ ու թուրքերի և լսում ենք որ նա ոտնձգութիւններ է ուզում անել նաև Փայաջուկի նկատմամբ. Ցուսով ենք որ մամուրը արդարութեամբ կնայի գործ կերին և խեղճ գիւղացիներին ազատի ծանր ճնշումներից։

Առաջնորդարանը ամսոյս 18-ին մի հեռագիր ստացաւ՝ թէ տեղի դատաւորը Շօրաւ գիւղացոց համար Սրփահտար Ազամից առած և ուղարկած հրամանը չի ընդունում և գիւղացոց զրկում է ու նեղում։

Ամսոյս 16-ին առաջնորդարանում կայացաւ ժողով տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400 ամեակի յօբելէանական հանդիսի կատարման համար։ Ներկայ էին երեք դպրոցների ուսուցչական խմբերը և ոմանք նոցա հոգաբարձուներից։ Ցոտնկայս կարդացուեց վեհափառի կոնդակը։ Ընտրուեց մի յանձնախումբ 2-ական հոգի Արամեան, 2-ական հոգի Լիլաւայի դպրոցների ուսուցիչներից և մի հոգի էլ կենտր.-ից։ Կլինի պատարագ, հոգեհանգիստ և ցերեկոյթ Ղալա թաղում։

Ամսոյս 20-ին Սրփահտար Ազամը, ինչպէս մեզ հաղորդեցին մեկնել է Մամաթ Աբաղ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

[1] Տես «Միտք» № 27

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Համաձայն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի Բ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի որոշման կը յայտարարեմ չեղալ՝ հակակարգապահական բնոյթ գրող և կուսակցական մարմիններուն ու անհատներուն վերաբերեալ այն բոլոր գրութիւններս, որոնք իբր հոգեկան տագնապի և գեշագրգռութեան արդիւնք հրատարակուած էին իմ կողմէ մասնաւոր շրջաբերականներով և մամուլի մոլոցով։

Այս առթիւ կը յայտնեմ նաև թէ Պատգ. Ժողովի որոշումով վերսին ընդունուած եմ Ս. Դ, Հնչակեան Շարքերու մէջ։

Հմայակ Արամեանց

8/21 Օգոստոս 1912

* * * Պատգ. Ժողովը փակուեցաւ, իր օրակարգը սպառելէ և ընտրութիւնները կատարելէ վերջ։ «Կոհակ»


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ“
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN
ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ
ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ
ՇԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ
Եւ նոր կտորներ, նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ նոյն տեմպերատիւրում պահելու յատկութիւն ունին։
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ՎԱՐՁՈՒ Է ՏՐԻՈՒՄ 4 սենեակից բաղկացած մի բնակարան իւր բոլոր յարմարութիւններով։
ԴԻՄԵԼ Մահտեսի Ալէքսան Տէր Օհանեանին։

ОТДАЕТСЯ квартира съ 4-хъ комнатъ со всѣми удобствами обращаться Г-ну *Алексану Теръ-Оганову*

ՀԱՆԴԷՍ-ԱՄՍՕՐՅԱ—Հայագիտական Ուսումնաթերթ. 26-րդ տարին բաժնեգինն է ամեն երկրի համար ֆր. 15, բուբլի 6, դրուշ 7.— Rédaction de la Revue «Handes Amsorya» VII/2 Mechitharistensgasse-4 Vienne [Autriche]

ԿՈՀԱԿ Պատկերազարդ թերթ, գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. Տէր և տնօրէն Հմ. Արամեան
Բաժնեգինն է { Պոլիս և գաւառները 15 դրուշ; Ամերիկա . . 1 դոլ; Արտասահման . 5 ֆր.; Ռուսիա և Պարսկ. 3 բբլ.
հասցէ Rédaction «GOHAG» B. P. Centrale, 125 Constantinople

ԿԱՅԾ —Օրգան Սօց-Դեմ. Հնչ. Կուս. Պոլսոյ Ուս. միութեան. Հասարակական գիտական,
ԴՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ 2-ՐԴ ՏԱՐԻ
Բաժնեգինն է { Թուրքիա 12 դրուշ, Ամերիկա 1 դոլ. արտասահման 4 ֆր.
հասցէ Rédaction «KAIDZ» poste Centrale 97. Constantinople (Turquie]

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Վարձու է տրուում իմ նորաշէն, մաքուր և օդասուն տունը, ուր առաջ բնակուում էր Դօքտօր Թրանոսը։ Ցանկացողները թող դիմեն պ. Վահան Անանեանին։

Արշակ Թովմասբէկեան

ԲԱԶՄԱՎԷՊ —Ազգային-բանասիրական-գրական-գիտական ամսաթերթ 70-րդ տարի, բաժնեգինն է ֆր. 10, բբ. 4, դոլ 2, դրշ. 50
Հասցէ՝ Rédaction de la Revue «Bazmavep» St. Lazare Venise (Italie)


Տպարան „ՓՈՐՈՍ“